ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 9-Լ

26.09.2019թ. ք. Երևան

Ղեկավարվելով ՀՀ Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի 7-րդ կետի, 6.1-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 08.08.2019թ-ի, N 1000-Ն որոշման, 24-րդ կետը , ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 730-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 8-րդ ենթակետով՝ Կառավարման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխության կատարմանը համաձայն կից հավելվածի:

Կառավարման խորհրդի նախագահ ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

հաստատված է
ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային
անվտանգության տեսչական մարմնի,
կառավարման խորհրդի 26.09.2019թ-ի 9-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախատեսվում է ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի հաստիքացուցակում Արարատի, Տավուշի, Սյունիքի և Արագածոտնի (չորս) տարածքային բաժինների առաջատար մասնագետների թիվը կրճատել մեկականով՝ փոխարենը Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության գլխավոր մասնագետների թիվը, համապատասխանաբար, ավելացնելով 2- գլխավոր մասնագետով և 1 առաջատար մասնագետով, իսկ Երևանի տարածքային բաժնի Տեխնիկական և հրդհային անվտանգության բաժանմունքի առաջատար մասնագետների թիվը ավելացնել 1 առաջատար մասնագետով :

Այսինքն՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի՝ 2019 թվականի մարտի 05-ի N 6-Լ հրամանում անհրաժեշտ է կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Արարատի տարածքային բաժին վերտառությամբ աղյուսակում «Առաջատար մասնագետ 5» բառերը փոխարինել «Առաջատար մասնագետ 4» բառերով:

2. Տավուշի տարածքային բաժին վերտառությամբ աղյուսակում «Առաջատար մասնագետ 5» բառերը փոխարինել «Առաջատար մասնագետ 4» բառերով:

3. Սյունիքի տարածքային բաժին վերտառությամբ աղյուսակում «Առաջատար մասնագետ 5» բառերը փոխարինել «Առաջատար մասնագետ 4» բառերով:

4. Արագածոտնի տարածքային բաժին վերտառությամբ աղյուսակում «Առաջատար մասնագետ 5» բառերը փոխարինել «Առաջատար մասնագետ 4» բառերով:

5. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչություն վերտառությամբ աղյուսակում «Գլխավոր մասնագետ 1» բառերը փոխարինել «Գլխավոր մասնագետ 3» բառերով:

6. Գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչություն վերտառությամբ աղյուսակում «Առաջատար մասնագետ 2» բառերը փոխարինել «Առաջատար մասնագետ 3» բառերով:

7. Երևանի տարածքային բաժնի տեխնիկական և հրդհային անվտանգության բաժանմունք վերտառությամբ աղյուսակում «Առաջատար մասնագետ 4» բառերը փոխարինել «Առաջատար մասնագետ 5» բառերով: